

2829

264

6-35

1932

ԵԿԵՂԵՑԻՆ




ՏՊ. Կ. ՏՕՒԻԿԵԱՆ

ԲԻԲ ՆԱՀՐ

ՊԵՅՐՈՒԻԹ

1932

4 2001



2010

ԵԿԵՂԵՑԻՆ

Եկեղեցին ունի մէկ ոգի, մէկ յոյս, մէկ տէր, մէկ
հաւատք, մէկ մկրտութիւն, մէկ Աստուած Եփ. 4:4-6:

ԱՍՏՈՒԾՈՅ ԵՐԱԳԻՒԾ. — Եկեղեցին պէտք է բաղ-
կանայ ընտրուած մարդերէ որպէսք որդեգիր եղած են
Յիսուս Քրիստոսի ձեռքովը Եփ. 1: 4-5: Ոչ հրեան և
ոչ Հեթաննոսը, այլ միայն վերստին ծնածները ու
Ս. հոգիով կնքուածները մէկ ըըաւ իր կեանքովը:
հաւատքի միջոցաւ որ կը դոյանայ Աստուծոյ խօսքին
քարոզութեամբը Յով. 17:21 Եփ. 1:13. Գործ. Յ:41, 44


Այս էական վարդապետութիւն երբեք նկատի չառներ
յարանուանական խնդիրը որ չէ յիշուած Ս. Դրքին մէջ:
ԱՍՏՈՒԾՈՅ ՆՊԱՏԱԿԸ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԻԶՈՑԱՒ. —

Աստուծոյ նպատակն է երկինքի մէջ իր կամքը կա-
տարել և ներկայիս մէջ իր վառքը ցուցնել երկրի
վրայ Եփ. 3:9, 10, որպէսզի գալու դարերու մէջ ցուց-
նէ իր կամքը ամէն բաներուն մէջ Եփ. 2:7, — ճշ-
մարտութեան (1 Տիմ. 3:15), երկրպագութեան (Փիլ 3:3. Եփ. 2:18) և ծառայութեան մէջ Եփ. 2:10:

ՈՒՂՂԻՉ ԵՒ ՄՊԻՉ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ. — Եկեղեցին
ունի գլուխ մը՝ որ տէրն է ամէն զօրութեան երկին-
քի մէջ ու երկրի վրայ Եփ. 1:22:

Հետեւաբար պէտք է զատուիլ ուրիշ ուղղիչ ու
մղիչ զօրութիւններէն Եփ. 2:2, և նաև եսէն Եփ. 2:3;
Անոնք որոնք հորէն ծնած են բոլորը միացած են
տէր Յիսուս Քրիստոսի կեանքով՝ կազմելու համար
Անոր մարմինը (Կեկեցին) որ է միջոց մը իր լրումին
համար Եփ. 1:23; Ան է բնակարան մը ուր Աստուած
կը բնակի իր հոգիովը Եփ. 3:17; 3:22; Ինչպէս որ
մարդու մը մարմոյն անդամները կը կազմեն իր մար-
մինը որ միջոց մը կ'ըլլայ զլխուն խորհածները ար-
տայայտելու եւ գլխուն տուած ուղղութեամբ ղեկա-
վարելու այն բաները զորոնք գլուխը կը տեսնէ, կը
կը լսէ ու կ'զգայ, նոյնպէս ալ հաւատացեալները կը
կը կազմեն Քրիստոսի եկեղեցին որ միջոց մըն է Ա-
նոր խորհութեները արտայայտելու, Անոր տուած ուղ-
ղութեամբ ղեկավարելու այն բաները զորոնք Ան
կը տեսնէ ու կ'զգայ, և նաև ընդունելու համար այն
շունչն ու սնունդը որ կաւգայ զլխէն.

Ոյնպէս սր տարբեր անդամներու փոխ-յարաբե-
րութեամբ ամէնուն միասին զլխուն հետ ունեցած
յարաբերութեամբ՝ կը գոյանայ գործունչութեան մի-
ութիւն մը Եփ. 2:18, 21:4:16:
ԱՍԻԿԱ ԸՄԲՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ ԵՂԱՇ ՄԻԶՈՑՆԵՐ —
Յայտնութիւն մը Եփ. 1:17, 18, Արտի մէջ բնակող
Քրիստոս Եփ. 3:17, Արմառացած ու հաստատուն սէր



38669 - 67

Եփ. 3:17, 18 Յգհ. 14:21:

ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԱՊԵՑԻՒԹԻՒՆԻ
(ԵՒՆՔ ՄԸ ԶԷ 1 ԿՈՐՆ. 16:19). — Գլուխ մը ունի՝ որ
է աէր Յիսուս Քրիստոս։ Դա ինքն է որ իշխանու-
թիւն ունի միջոցները հայթայթելու և ծրագրելու-
բոլոր ի մի հաւաքուած անդամներուն յառաջդիմու-
թեան համար։ Այս անյեղի ճշմարտութիւն սըն է
Եփ. 4:15, 16, 1Կորն. 15:58, Մէկ մարմին երկու գը-
լուխներ չունենար, հետեւաբար եթէ ուեէ անդամ
ձախողութիւն կ'ունենայ այդ ձախողութիւնը պէտք
է միշտ վերագրել նոյն անդամին թերութեան որով
ան չի յանձնուիր ուղղիչ ու մղիչ զլխուն, Երբ այս
իրողութիւնը ընդունուի հաւատաքով ու սիրով աւելի
յառաջդիմութիւն անխուսափելի է այս աստուածա-
յին զրութեան մէջ։ Ընկերութիւններ, անցեալի
վարժութիւնը կենցաղի և պաշտամունքի (մէջ, ու
մեր մտային տաղանդները գործածելու մէջ սիսալ
հասկացողութիւնը մեծ արգելքներ եղան զլխուն
յանձնուելու և հազանդելու համար), Աէր, մեծ սէր
միայն կը լուծէ այս կարեւոր հարցը 2 Յգհ. 6 :

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ՄԱՐՄԻՆԸ . Կմախք կամ ոսկոր
ներ Աստղեալները և Մարգարէնները Եփ. 2:20-5, 30,

Ասոնց միջոցաւ ձև տրուած է մեր հաւատաքին
(1 Կորն. 1:2, 10, 14:37, 1 Տիմ. 4:16, Յուդ. 3), և այս-

52 / 3f - 64. 2.

պէս հաստատութիւն և զօրութիւն ունեցած է ան
Եփ. 4:14:

ՄԱՍՆԻ ԿԱՄ ԱՆԴԱՄՆԵՐ. — Բոլոր անոնք որոնց
սիրտերուն մէջ կը բնակի Քրիստոսի հոգին՝ անդամ-
ներ են 1 Կորն. 12:13, անոնք որոնք անձնապէս կըն-
դունին Աստուծոյ գործը զոր ըրաւ Քրիստոսի ձեռքո-
վը մեղքի ու կեանքի համար՝ անգամներ են 1 Յիշ.
4:10,15,5:1,10-12. Հովմ. 8:9: Քահանաներ և քա-
րոզիչներ կընան անդամներ շահիլ միայն իրենց եկե-
ղեցիներուն համար, բայց չեն կընար Քրիստոսի ե-
կեղեցին կազմել որովհետեւ ատիկա Տէրոջ գործն է
բացարձակապէս գործ 2 47-5:13-14:

ԱՆԴԱՄՆԵՐՈՒԻ ԳՈՐԾԸ. — Հաւատալ գլխուն
Յիշ. 6:29, Էնաղանդելով հաւատքին Հովմ. 16:25,
26, թէ լսելով և թէ պահելով Աստուծոյ խօսքը Դուկ.
11:28: Պաշտել զլուխը 1 Պետ. 2:5, որովհետեւ նորէն
ծնածները միայն կընան պաշտել զայն Յիշ. 4:23.
7:39: (Յարուցեալ Քրիստոսն է միայնակ պաշտօն-
եան որ կը միջնորդէ անհրաժեշտորէն 1 Տիմ. 2:5.
Եբր. 7:25,13:15. Մթ. 18:20:) Աղօթել ու փառարա-
նել՝ լրացնելով պայմանները 1 Կորն. 11:4-5, 1 Տիմ.
2: 8. Կող. 3:16: Պատմել իր մահը 1 Կորն. 11:26-
(Եփ. 3:10), նաեւ իր կեանքը (2 Կորն. 4:10) և սաեղ-
ծող ամենակարող ազդեցութիւնը Եփ. 4:16. Փիլ. 4:13

2 Կորն. 2:14. Գործ. 11:20-21. 1 Պետ. 3:15: 5 Հնա-
զանդիլ անոնց որոնք իշխանութիւն ունին, ինչ-
պէս մատերը կը հնազանդին ափին ու ափը գաստա-
կին 1 Թես. 5:12,13 Եբր. 13:17: 6 Դատել սիրով
քաջալերելով զանոնք որոնք մարմինին անդամ-
ներն են 1 Կորն. 5:12. Հովմ. 14:15. Եբր. 10:24:

7 Նայիլ և պատրաստուիլ Անօր երկրարդ գալստեան
համար որպէսզի երբ Ոն զայ, առնէ իր եկեղեցին, իր
հարսը իր քովը Եփ. 5:27. Տիմ. 2:13. Եբր. 9:28.
2 Պետ. 3:14, 1 Յով. 3:3. Ամէն բանի մէջ տիրող շար-
ժառարթները պէտք են ըլլալ սէր հեղութիւն ու երկայ-
նամտութիւն Եփ. 4:2. 1 Կորն. 12:31 և 14:1:

ՄՈՒՐԴԻ ՈՒ ԿԻՆ. — Ասոնց է իւրաքանչիւրը ու-
նի պատասխանատուութիւն մը: Եղբայրներունն է
մեզի յիշեցնել Աստուծոյ աւագութիւնը Քրիստոսով
1 Կորն. 11:7: Խոկ քրյուերը կը յիշեցնեն մեզի թէ
մարմինը մասնաւորապէս զատուած ու վերապահուած
է զլիսուն համար Եփ. 5:25-27: Վերջինները պէտք
չէ բռնարարեն մարդոց զիրքը՝ պարզեւները զործա-
ծելու մէջ (1 Տիմ. 2:12. Տիմ. 2:3-5), բայց մարդե-
րըն ալ օգտուելով ասկէ պէտք չէ որ իրենք զիրենք
զերագաս նկատեն կանանց 1 Կորն. 11:11:

ԱՆԴԱՄՆԵՐՈՒԻՆ ԱՆՀԱՄԱԿԱՆ ԱՃՈՒՄԸ. — Կրլ-
լայ իւրաքանչիւրին համար որոշուած նպատակին

համեմատ՝ որ է անձնական սրբութիւն, որովհետեւ
եղունգները արտեանունքներուն վրայ չեն բունիր և
ոչ ալ ակռաները մազի զործ կրնան կատարել եփ. 2:
10. Փիլ. 3:12-15, 1 Տիմ. 2:7; Այս խնդիրը այն ատեն
միայն կը հասկցուի ու կը կատարուի երբ Քրիստոս
հաւատքավ կ'ընդունուի իրենց գլուխ որուն հրամա-
նին տակ կատարուին ուտելը, խմելը ու ամենօրեայ
բոլոր զործերը Գաղ. 2:20. Հոլմ. 6:19. Կող. 3:17.
Մարմինին տարբեր անդամներն իրարու հանգէպ տար-
բեր կապակցութեան մէջ են և անոնցմէ ոմանք գրլ-
խուն մօտ են ուրիշներ աւելի հեռու են անկէ, սա-
կայն բոլորն ալ ուզգակի կապ ունին անոր հետ ջի-
ղերու միջոցաւ։ Հետեւաբար զլուխն է որ կզդայ ու-
րախութիւնը կամ ցաւը և կամ անդամներուն ամէն
մէկուն պէտքը, ու կարող է ուզգակի հազորդակ-
ցութիւն ընել իւրաքանչիւրին հետ։ Անաւասիկ իւըն-
դիրը նոյն է Քրիստոսի մարմնոյն և իւրաքանչիւր
անդամին համար (Մթ. 10:29-32), ամէն մէկը զոհ
սրտով կը մնայ Քրիստոսի մէջ կատարելով այն պար-
տականութիւնը որուն կանչուած է (1 Կորն. 7:17-
24. Եբր. 13:5, 6), և պատրաստ, ուշադիր ու եռան-
դուն է բարի զործերը պահելու համար (Տիտ. 2:14.
3:8), և կցորդ չըլլար անպատուղ զործերուն եփ. 5:11)
ոչ թէ մարդահաճոյի պէս աչքի առչեւ կը ծառայէ,

հապա անկեղծութեամբ Տէրոջ եփ. 6:6, խօսքը միշտ
կըլլայ չնորհքով, առանց աղտեղութեան, յիմարու-
թեան ու խեղկատաղութեան որսնք չեն վայելեր
կող. 4:6. եփ 5:4: Իմաստութեամբ կը վարուի անոնց
հատ որոնք մարմինէն զուրս են։ Ժամանակը ծախու-
կառնէ որուն համար առեւտուրի մարդիկ շատ դրամ
պիտի վճառէին եթէ կարող ըլլային ծախու առնել
զայն, Կող. 4:5, 1 Տիմ. 4:8։

ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ Ո.ՃՈՒՄԸ. — 1 Կորն.
3:9, Եբր. 10:25 Երախայի (պէպէքի) մը ձեռքին մա-
տերը համեմատաբար կը մեծնան իրարու օգնելու հա-
մար, ամէն մէկը իր կարողութեամբը, եթէ ոչ ձեռքը
տձեւ կնրպարանք մը պիտի առներ և իրարու օգնելու
զործը պիտի խափանուէր, կամ անկարելի պիտի
զառնար)։ Առաքեալներու ձեռքով Ս. Խօսքին մէջ
զրուած աստուածային ծրագիր մը (Կեանքի օրէնք)
կայ զոր պէտք չէ երբէք զանց ընել եփ. 2:20; 1Կորն.
4: 6: Հաւատացեալները որոնք Ս. Հոգւոյն միջոցաւ
զլիսուն հպատակելով տեղ մը ժողուած են եկեղեցի
մը կը կադմեն։

Կեանքի օրէնքը գիտնալ լաւ է, աննդարար
կերակուր, մաքուր օդ, յարմար հագուստ, ուզիկ
ծրագիր ունենալ շատ կարեոր է, բայց առանց
կեանքի, որ է Աստուծոյ չնորհքը, այս է լոկ օրէնք

մը . որ չկրնար մարդ մը արտաղրել եւ միւս կողմէն սա ալ ճշմարիտ է որ մարդ մը կու պրով ոնու ցանել երկաթեայ հագուստով պատսպարել և սխալ ձրագրով առաջնորդել շատ վանդաւոր է : Կեանքի օրէնքը կեանքի համար գործադրելով է որ մենք կրնանք զօրաւոր ըլլալ և մէկդմէկ զարգացնել միութեան մէջ Եփ. 4: 14. ՏՏիմ. 4: 16. Կորն. 12: 14-26. (Երբ մարմնոյն մէկ անդամը տկարանայ կամ իր գործը չկրնար կատարել և կամ վնասուած է, միւս անդամները, զայն կտրելով մէկդի չեն նետեր: Բայց Փըլիուն առւած ուղղութեամբ շուտով օգնութեան կր հասնին անոր: Ասոր պատճառը սա է որ ամէն մէկ անդամ կապրի միւս անդամներուն համար ալ և ոչ թէ լոկ իրեն կամ իր փառքին համար, և այսպէս ան ալ իր կարգին պատրաստ է օգնելու կարեռ կամ նուեազ կարեսոր անդամին: Նաև անդամի մը կամ անդամներու ժողովքի մը (եկեղեցի) զօրութիւնը կախեալ չէ իր զօրութենէն կամ իր մտքէն, հապա Գլխուն հետ իր ունեցած կապակցութենէն: Որովհատե երբ շուն մը կը յարձակի պղտիկ մատին վրայ, այս յարձակումը ոչ միայն կը պատկանի միւս մատերուն, հապա գլուխին ևսոր ի մի կը հաւաքէ մարմնոյն բոլոր զօրութիւնները որպէսզի կացութիւնը վանդգէն աղտատէ: Այնպէս է խընդիրը Քրիստոսի

մարմնոյն ամէն մէկ անդամին համար, եթէ ան կը նցունի Քրիստոսը իբրեւ զլուխ այս միութեան: Այս անդամին մէջ ու անոր մէջէն պիտի հոսի սէր և օրէնութիւններ: Եթէ ոչ թմրութիւն և անդ սմալուծութիւնը յառաջ պիտի այսուհետ պիտի զայ: Այս միութեան սկզբունքով կարելի կը լլայ տարբեր անդամներու միջեւ յարմար գործունէութիւն մը և սակայն նոյն ըսկզբունքը կարգիլէ զանոնք այն պաշտօնը կամ զործը ընելէն որ իրենցը չէ: Բայց եթէ միութեան բոլոր պատասխանատուութիւնները մէկ անդամին վրայ կեդրոնանայ, ան չպիտի կրնայ գոհացուցիչ կերպով կատարել զանոնք որչափ ալ ան ինքզինքը կարող ձեւացնէ: Այս կը նմանի այն ձեռքերուն որոնք կ'ուզեն կատարել ոտքերուն ու աչքերուն զործերը, և կ'արգիրէն նոյն անդամները իրենց պարտականութիւնները կատարելէն և այսպէս զանոնք կը դատապարտեն անդործութեան):

Գլուխին հետ ուղիղ յարաբերութեան մէջ զըտնուիլ կարենալու համար պէտք է բոլոր անդամները մէկտեղ աճին ընդհանուր կանոնին համեմատ: Զարգանալու համար պէտք է պահել կապակցութիւնը իրարու հետ և սիրոյ կապակցութիւնը զլխուն հետ: Հետեւաբար սա եօթը հարցումները կը դրուին քուդիրք գործելու կամ որոշելու համար Գործ. 2:41-42:

1. Աստուծոյ խօսքը ընդունելով կեանք ունեցած ես
1 Պետ. 1:23, և կը շարունակե՞ս ու բախութեամբ ըն-
դունի զայն որպէսզի ամէն բանի մէջ այն առաջնորդ
ըլլայ քու կեանքիդ ոչ թէ քու գաղափարդ կամուրիցնե
րունը : 2. Ընկղմելով մկրտուած ես նոր կեանքը ըն-
դունելէդ ետքը որպէսզի զուն ընդունիս կատարեալ
մահդ իր մահուամբը և կեանքի յեցունութիւնը իր
յարութեամբը : 3. Միացած ես այն խուսթին 2 Տիմ.
2:22 որոնք կ'աշխատին զատուիլ անհաւատներէ կամ
անոնց խառնուրդ խումբերէ և նոյն իսկ այն հաւա-
տացեալներէ որոնք կը կառավարուին անուանական
եկեղեցիներու մարզոց կողմանէ, և կը կառավարուի՞ս
մի միայն Տէր Յիսուս Քրիստոսով որ է զլուխ ամէն
բաներու մէջ 2 Կորն. 6:14-18 : 4. կը շարունակա՞ս . Ա-
ռաքեալներու վարդապետութիւնը զարգանալու , եր-
կրպագելու և ծառայելու համար Մթ. 28:20. 1 Կորն.
1:10. 14:37 : 5. Հաղորդակցութիւն ունի՞ս անոնց հետ
որոնք ցուցուած են հետեւ եալ համարներուն մէջ
1 Յովէ. 1:3 Փիլ. 2:1,13. 1 Կորն. 12:11. Գործ. 13:2.
Կող. 1:29 : 6. Հաց կը կտրե՞ս տէր Յիսուսը յիշելու
համար որ է հիմը քու նոր կեանքիդ : Ասիկա յարա-
նուական տարրերութիւններ յուզելու խնդիր մը
չէ 1 Կորն. 11:29 : 7. Կաղօթե՞ս ամէն բանի համար
Աստուծոյ իբրեւ հայրեկի մը Փիլ. 4:6, խոնարհու-

թեամբ, լրջութեամբ և նաեւ վատահելով (1 Յլ. 5:
14-15. Եր. 10:22), մօտենալով ամենակարող Աստու-
ծոյ, գոնութիւն մատուցանելով ամէն մարզոց, թա-
գաւորներու, բոլոր սուրբներու եւ այլ/նի համար, ըս-
պասելով պատասխանին 1 Տիմ. 2:1,2. Եփ. 6:18,19),
Ազօթքի ժամանակ քու սրտիդ վիճակը սա է, կըն-
դունիս թէ գուն ինքզինքիդ բաւական չես ու քու մի-
ակ բաւականութիւնդ է տէր Յիսուս Քրիստոս, և
այսպէս դուն ինքզինքդ կը գնես այն գիրքին մէջ
ուր Ան կրնայ սորվեցնել իր կամքը քեզի :

Ուստի ազօթքի ատեն քու գիրքդ պազ վերաբե-
րում մը , անկենդան դիրք մը չէ , և ոչ ալ միայն մեր
հաղորդակցութիւնը չէ իրեն հետ, այլ նաև է իր հա-
ղորդակցութիւնը մեր հետը — մեր հաղորդակցութիւ-
նը իրեն հետ, իր հաղորդակցութիւնը մեզի հետ,
այս է թանկագին փոռձարութիւնը զօրաւոր գործոն
կեանքի մը :

ՊԱՐԴԵԽՆԵՐ. — Ասոնք սուրբերու կատարեւու-
թեան համար միջոցներ են ինչպէս քարոզութիւն և
Քրիստոսի մարմնին շինութիւնը Եփ. 4:11,12 : Պար-
գեւներու զանազանութիւն կայ, բայց հոգին մէկ է
որ կը գործածէ զանոնք 1 Կորն. 12:4,11 : Մենք չենք
կրնար ունենալ պարզեւ մը կամ պարզեւներ առանց
ունենալու ինքը, հոգին, ոչ ալ կրնանք գործածել զա-

նոնք առանց իրեն ինչպէս չենք կրնար ունենալ տեսողութիւն առանց կեանքի, որովհեաեւ այս պարգեւները հոգւոյն ձիրքերն են: Աստուած կ'ուստայ զառնոնք, կրթութեամբ՝ վարժութեամբ չեն ստացուիր, թէպէտ վարժութեամբ կը զարդանան Հ Տիմ. 1:6: Այս հակասութիւն մը կը կազմէ ներկայ դարուն կրթական մոլար ընթացքին, Զեռքեր դնելու կամ Ս. հոգւոյն հաղորդակցութիւնը ունենալու խնդիրը պատճառ եղած է շփոթութիւն յառաջ բերելու շատ մը հաւատացեալներու մաքին մէջ: Անոնք կը խորհին թէ այն մարդը որուն վրայ ձեռքեր կը դրուին գերադաս էակ մը Կ'ԸԱՅ այդ գործոզաւթենէն վերջ: Այս արմատէն սխալ է: Զեռքերը դնելը կը ցուցնէ Ս. հոգւոյն գործին մէջ հաղորդակցութիւն, առանց որուանիմաստ է ու պարապ բան և նոյն իսկ ուրիշ սըխալներու ալ կ'առաջնորդէ, ինչպէս հիւանդներու բժկութիւն (Գործ. 9:17, 18, 19:11) կամ մասնաւոր գործի մը համար ձիրք (Գործ. 13:3, 14:26), պէտք չէ որ այս տեսակ բաները միանան Ս. հոգւոյն գործերուն հետ ի բաց առեալ «ինչպէս կուզէ» 1 Կորն. 12:11, (Առանց ձեռքեր դնելու ալ պարզեռներ եղած են Գործ. 18:24, նաև բժկութիւն Գործ. 5:15, 16, նաև շնորհք Գործ. 11:23):

ԷՆԴԱՆՈՒՐ ՊԱՐԳԵՒՆԵՐ.— ՀԱԻԱՏՔ որ մեզմէ

չէ, բայց պէտք է վարժութիւն ընենք անոր մէջ զորմեզի արուած է, զարգանանք ու մեծնանք հաւատքի մէջ Հովմ. 12:3. 1;17 2 Թես. 1:3, ՇնՈՐՀՔ նաև կը արուի բոլորին, այս է երկնային պարզեւ կենդանի հաւատքը արտայայտելու համար երկրի վրայ, այնպէս որ շնորհքի վրայ շնորք ըսել կը նշանակէ տաղանդի կամ ձիրքի ընդլայնում Եփ. 4:7. Ցովէ. 1:16. 2 Պետ. 3:18

ՄԱՐԴԱՐէ, Յատկութիւն, Ս. հոգիով կը խօսի: Այս չի նմանիր վարդապետին կանխամտածած խորհրդին որ փորձառութեան համեմատ կը զոյանայ, մինչդեռ մարդարէն բուն զիտութեան ակէն կը ներշնչուի ուղղակի Գործ. 21:11. Հովմ. 12:6: Յոլոր հաւատացեալները ազատ են սպասաւորութիւն ընելու Ս. հոգւոյն առաջնորդութեամբ պայմանաւ որ մարդարէներու կողմանէ քննութեան ենթարկուին ու ուղղուին: Ամբողջ գործը մէկ անձին վւայ կեդրոնացնել սխալէ, ինչպէս շատ տեղեր կ'ընեն: 1 Կորն. 14:29, 32, 1 Յվէ. 4:1-6:

(Ներկայիս մէջ սովորական կերպը ասոր հակառակն է, և ասոր համար Աստուծոյ զործը կը սահմանափակուի բոլոր պարտականութիւնները մէկ անձին վրայ կեդրոնացնելով որ երբեք ի վիճուկի չը կընար ըլլալ տանկ ծանր բեռ մը կրել: Հոգին Սուրբ լիովին կարող է կառավարել ուեէ զործ մը երբ անհատները իրեն յանձնուին իբրեւ իր զործիքները):

ԳՈՐԾԼ. — Շինութիւն, յորդորանք, միմիթարութիւն յանդիմանութիւն և դատասաան (1Կորն. 14:3,24), աւելորդ յայտարարութիւն մը պէտք չէ, ինչ որ գրուած է Ս. Խօսքին մէջ բաւական է, քանզի արգէն պէտք եղածը արուած է Յուդ. 3:

Ոմանք կը խորհին թէ, որովհետեւ մարգարէին դործը լմնցած է այլես անոր պէտք չ'կայ, Բայց 1 Կորն. 14:1,39 կուսացանէ ասոր հակառակը:

2. ԱԻԵՏԱՐԱՆԻՉՆԵՐ. — Յատկութիւն. Զը փրկուած մեղաւորներուն հանդէպ իրենց սրտերուն մէջ պատասխանատուութիւն կ'զգան և խաղաղութեան ու զօրութեան աւետիսը կուտան անոնց Գործ. 10:36, Հոգմ. 1:14,16: Տէրոջ ձեռքն ալ իրենց հետ կ'ըլլայ Գործ. 11:21, Երր. 2:4:

ԻՐԵՆՑ ԳՈՐԾԼ. — Ամէն տեղ խօսքը քարոզել է Գործ. 8:4, եւ նիւթը սա է, Քրիստոս մեր մեղերուն համար մատնուեցաւ և նորէն յարութիւն առաւ մեր արդարացման համար: Անոնք յարատեւութեամբ կը պնդեն ասիկա թէեւ այս յիմարութիւն կը սեպուի մարդոց համար 1 Կորն. 1:21-2:4:

ՀՈԴԵՒՈՐ ՀՈՎԻՒՆԵՐ. — Հովիւ բառը հայահաւասար է ծերերուն, եպիսկոպոսներուն կամ վերահսկողներուն, նաև կառավարողներուն:

ՅԱՏԿՈՒԹԻՒՆ. — Օրինակելի, անձնուրաց կեանք

մը կ'ունենայ և սորվեցնելու համար կըլլայ 1 Տիմ. 3: 1-7, Տիմ. 1:6.9, 1 Պետ. 5:3, Երր. 13:17. 1 Կորն., 8: 16: Անոնք Ս. հոգիին կողմանէ կ'որոշուին (Գործ. 20:28. 2 Կորն. 8:16), կամուղղակի (1 Կորն. 16:15,16), կամ մէկու մը կողմանէ (Տիմ. 1:5), բայց ոչ թէ անդամներուն կողմանէ: Այսպէս որ ան է միայն ճշմարիտ հոգիւը զոր Տէրը կընէ և ոչ թէ ան որ Տէրոջ կողմանէ կանչուած չէ և մասնաւոր մակդիրներ կրելով մասնաւոր հագուստներ կը հագնի: ԻՐԵՆՑ ԳՈՐԾԼ. Գլուխին հաւատարիմ մնալով կը միմիթարեն կը քաջալերեն, կ'օդնեն, համբերութեամբ չարին և բարիին վրայ կը հսկեն, չարէն կզգուշացնն, Ս. հոգին չեն մարեր, պատշամը չեն անարգեր, կ'ուրախանան, կ'աղջոթեն և կը գոհանան 1 Թես. 5:14-21 Եփր. 5:14:

ՎԱՐԴԱՊԵՏԵՆԵՐ. — Աստուծոյ ճամբան կը բացազրեն շատ ուշադրութեամբ Գործ. 18:26: Հետեւաբար իրենք զիրենք Աստուծոյ ներկայացնելով Ս. հոգիէն կը սորվին, որպէսզի բանուորներ ըլլան որոնք չեն ամշնար ճշմարտութեան խօսքը ուղիղ բացատրելու Յգհ. 16:13,14. 2 Տիմ. 2:15. 1 Կորն. 2:13:


ՀՐԱՇԲՆԵՐ. — Մասնաւոր ներգործութիւններ են 1 Կորն. 12:10 որոնք կեանքի վրայ ազգեցութիւն ունին Գործ. 3:7. 5:5. 13:11. 27:24. ՆՊԱՏԱԿՆ է հաւատաբը հաստաել և կեանքը օրհնելով Աստուծոյ փառք բերել Յգհ. 11:40, 42. Գործ. 14:3:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ.— Պէտք է ըլլալ աստուծոյ կամքին համեմատ և տնօր փառքին համար 2 կորն. 12:9. Կերպը Աստուծած ինք կ'ընտրէ 1 Տիմ. 5:23։ ՕԳՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — Ալորեայ և զրամական գործերուն հոգ տանիլ (Գործ. 6:3. 2 կորն. 8:19), հովիւ եղբայրներուն օժանդակել (Գործ. 13:5), հեւրասիրութիւն Գործ. 16:15. 3 Ցի. 6-8։ ՅԱՏԿՈՒԹԻՒՆ. — 1 Տիմ. 3:8-13։ Գործ. 6:3. 2 կորն. 8:18. ԼՅԶՈՒՆՆԵՐ. — Այս նշան մըն է անհաւատներուն համար, բայց առանց թարգմանութեան և հասկացողութեան այս իսկ անօգուտ բան մըն է 1 կորն. 14:14,15,22-28. Գործ. 2:4-11։

Պարզեւ մը ունենալ և զայն գործածել շատ լուրջ
բան մըն է, որովհետեւ եթէ մարդ մը կը խօսի Աս-
տուծոյ Կողմանէ, ըսել է թէ Աստուծոյ պատգամը
կուտայ, և ասիկա կեղծելու ջանալ շատ մեծ պատաս-
խանատուութիւն կը բարէ ընողին վրայ 1 Պետ. 4:11.
Գործ. 19:13-17: Պարզեւի մը գործածութենէն նշան-
ներ յառաջ գալը հաւանական բան մըն է, բայց եթէ
ասիկա Ս. հոգւոյն միջոցաւ կեանք և խաղաղութիւն
չ'արտադրեր, ու միանգամայն Աստուծոյ ալ փառք
չը բերեր սատանայէն է ատիկա Յվ. 8:12, Հով. 8:6.
2 Թես. 2:7-10: Ան պէտք է գորնածուի հաւատարմ-
օրէն ներկաներուն զարդացման համար և ոչ թէ ցոյ-
ցի համար 1 Պետ. 4:10: Մաքին բոնելիք ընթացքը
սա Ալլալու է որ ուրիշներու անձը աւելի լաւ սեպէ

քան թէ իրենինը (Փիլ. 2:3. Հովմ. 12:3), և պարզեւը միայն երեւնալու է ու միայն ան գործադուելու է հապատակելով ու հնազանդելով Գլխուն (Եփ. 4:6): բոլոր պարզեւները կրնան գործածուիլ ազատորէն ամէն տեղ, պայմանաւ որ Ս. հոգիէն առաջնորդուին Գործ. 11:27, 28. 15:27, 32. եթէ Աստուծոյ խօսքէն առաջնորդուելով այս զրութիւնը հետապնդուի, և պարզեւները Ս. հոգիով գործածուին ոչ մէկ անկարգութիւն տեղի պիտի ունենայ հոն, ընդհակառակը ամէն բան ամենայն կարգապահութեամբ պիտի ընթանայ: Տէրոջ առջեւ հոգիներ պիտի հաւաքուին, պս բգեւներ պիտի ընդունուին ու գործածուին և պիտի զարգանան:

၆၃၁။ — ՄԿՐՏԾՈՒԹՅՈՒՆ, — Մկրտուելու են անսնէ
որոնք անձամբ կ'ընդունին Աստուծոյ գործը զոր Ք-
րիստոս ձեռքով ըրաւ մեղքի եւ վերսափին ծննդի հա-
մար, երեխայ մը ասիկա չը կրնար ընել Գործ. 2:41.
8:37; ԿԵՐՊԸ. — Ընկղմամբ պէտք է ըլլայ Գործ. 8:38
որ է օրինակը հաւատքով մեռնելու ու թաղուելու
իբրև մեղաւոր քրիստոսի մէջ որ մեռաւ, որպէսզի
մենք իրմով մեռած իր կեանքով յարութիւն առած
սեպուինք Հովմ. 6:3,4: Հաւատացեալներուն մկրտու-
թիւնը կը կատարաւի խոնարհութեամբ Տէրը փառա-
ւորելու համար ընդհանուրին առջև անվերապահու-
թեամբ: (Տեսակ մը եսարկութիւնը ըստ մաս, աւատա-



ցեալները կ'արգիլէ այս ծէսը գործադրելէ): Այս ծէսը կատարելու համար մասնաւոր մէկը պէտք չէ բայց միայն Աստուծոյ հաւատարիմ զաւակ մը Գործ. 9:10, 18: Բոլոր ուրիշ ձեւերը որոնք կը կատարուին մարդու մը վերստին ծննդէն առաջ և յետոյ չեն կրնար ենթադրուիլ իրեւ լրումը Աստուծոյ ծէսին ձևարիտ ձեւին Գործ. 19:3-5:

Հ03 Կ81ԵԼ.— Զայս կը կատարենք իրեւ յիշատակը մեր տէրոջ մարմինին որ կոտրուեցաւ մեր միութեան համար, և միայն նորէն ծնած անհատներ կը կատարեն 1 Կորն. 11:24,39: Անոր արիւնը կամ կեանքը թափուեցաւ մեր մեղքերուն համար որպէսզի մենք կարողանանք ապրիլ Մթ. 26:28: Այս կրնայ կատարուիլ ունէ տեղ ուր հաւատացիալները հաւաքուած են Գլխուն հպատակելով Գործ. 2:46.20:7, և կը կատարուի յաճախ որքան որ կուզուի: Մեր սրտերը զըւարթացնելու համար չէ հապա զինքը փառաւորելու ու փառաբանելու համար:

ԱՅՍՊէՍ.— «Զանալով հոգւոյն Սրբոյ միաբանութիւնը խազաղութեան կապովլ պահել» Եփ. 4:3:



NL0029661

2746